ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ 1

Հրապարակային մրցույթին մասնակցող կազմակերպություններին ներկայացվող պահանջներ

Հրապարակային մրցույթին չեն կարող մասնակցել այն անձինք /կազմակերպությունները/, որոնք անվճարունակ են, լուծարման գործընթացում սնանկ են ճանաչվել, մրցույթի հայտը ներկայացնելու պահին ֆինանսական կազմակերպություններում ունեն ժամկետանց պարտավորություններ:

Հրապարակային մրցույթի որակավորման նվազագույն պահանջներն են՝

- անկախ գնահատող կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 5 տարվա անկախ գնահատող կազմակերպության աշխատանքի փորձ,
- անկախ գնահատող կազմակերպությունը պետք է ունենա առնվազն երկու համապատասխան որակավորում ստացած գնահատող, որոնցից առնվազն մեկը պետք է լինի հիմնական աշխատող,
- անկախ գնահատող կազմակերպության առնվազն երկու համապատասխան որակավորում ստացած աշխատակիցները պետք է ունենան առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ տվյալ ոլորտում,
- կազմակերպությունը մրցույթին մասնակցելու պահին պետք է ունենա համագործակցության պայմանագիր առնվազն 2 ՀՀ առևտրային բանկերի հետ, կամ առնվազն 1 առևտրային բանկի և 2 այլ ֆինանսական կազմակերպությունների հետ:

Բանկը մինչև մրցույթի հայտերի ամփոփման նիստի օրը անհրաժեշտության դեպքում, կարող է պահանջել հրապարակային մրցույթի մասնակիցներից ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:

Ցանկություն հայտնած մասնակիցները մինչև մրցույթի հայտերի ընդունման վերջին օրը կարող են հետ վերցնել մրցույթի հայտերը (հրաժարվել մրցույթին մասնակցելու իրենց իրավունքից):